4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ ***պատվիրատուի*** *և գնահատող հանձնաժողովի* ***գործողությունների*** *(անգործության) և* ***որոշումների*** *բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18 ծածկագրով <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մրցույթի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել.

1.1. անվավեր ճանաչել <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/18 ծածկագրով <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման մրցույթի հրավերը:

2. <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ի բռնագանձել 60 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<ԱՆՆԱՐԿԱ>> ՍՊԸ-ի բռնագանձել 100 000.00 ՀՀ դրամ փաստաբանի վարձատրության գումարը:

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՕՀԱՆՅԱՆ**